

Արմեն Յ. Մարտիրոսյան
Պատմ. գիտ. թեկնածու

ՄԱԿ-Ի 1948 Թ. ԳԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի ԿՈՆՎԵՆՏԻԱՆ ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Վերլուծություն և առաջարկներ՝ փաստաթուղթն ուժի մեջ մտնելու
60-ամյակի կապակցությամբ*

Այս տարի լրացավ ՄԱԿ-ի «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման ու դրա համար պատժի մասին» կոնվենցիայի (այսուհետև՝ Կոնվենցիա) ուժի մեջ մտնելու 60-ամյակը: Համաձայն փաստաթղթի XIII հոդվածի՝ այն պետք է ուժի մեջ մտնեն ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի մոտ Կոնվենցիայի վավերացումից կամ դրան միանալու 20-րդ ակտի դեպոնացումից 90 օր հետո,¹ ինչը տեղի ունեցավ 1951 թ. հունվարի 12-ին:

1. Կոնվենցիայի նախապատրաստման ընթացքը

Ցեղասպանության մասին ՄԱԿ-ի Կոնվենցիայի մշակման և ընդունման տարիները համընկան «Սառը պատերազմի» սկզբնավորման և երկու հակադիր ճամբարների ձևավորման հետ: Միանգամայն բնական է, որ այդ բարդ աշխարհաքաղաքական իրադրությունն իր ազդեցությունն էր ունենալու փաստաթղթի մշակման գործընթացի, առավել ևս՝ նրա վերջնական տեքստի վրա:

Կոնվենցիայի ստեղծման սկիզբն ազդարարվեց 1946 թ. դեկտեմբերի 11-ին: Այդ օրը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում ընդունվեցին միանգամից երկու բանաձևեր: Գրանցից 95(1)-ը հաստատում էր միջազգային իրավունքի այն սկզբունքները, որոնք ամրագրվել էին Նյուրնբերգյան տրիբունալի կանոնադրության ու վճիռների մեջ²: Իսկ 96(1)-ով սահմանվում էր, որ ցեղասպանության հանցագործության գլխավոր մեղավորները ենթակա են պատժի՝ անկախ այն բանից, թե այդ հանցագործությունը կատարվել է կրոնական, ռասայական, քաղաքական կամ որևէ այլ շարժառիթներով և այն իրականացնողները հանդիսանում են մասնավոր անձինք, պետական պաշտոնյաներ կամ գործիչներ³: Փաստորեն, ապագա

* Հոդվածն ընդունվել է տպագրության 25.11.2011:

1 Տե՛ս Статья XIII Конвенции ООН 9 декабря 1948 года «О предупреждении преступления геноцида и наказании за него», Права человека. Сборник международных договоров, т. 1, ч.2, Универсальные договоры ООН, Нью-Йорк и Женева, 1994, с. 783.

2 Տե՛ս Резолюции, принятые Генеральной Ассамблеей на Второй части Первой сессии с 23 октября по 15 декабря 1946г. Лейк-Соксес, Нью-Йорк: ООН, 1947, с. 139-140.

3 Տե՛ս Резолюции..., с. 140:

Կոնվենցիային ծնունդ տվող այս բանաձևը արդեն իսկ չեզոքացնում էր ցանկացած հիմնավորում կամ շարժառիթ, որը կարող էր ծառայել իբրև ցեղասպանության իրականացման մեջ մեղադրվող անձանց արդարացում կամ նրանց պատիժը մեղմացնող հանգամանքներ փնտրելու հնարավորություն⁴: Ելնելով այս բանաձևից, Գլխավոր ասամբլեան հանձնարարեց ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական հարցերով խորհրդին ուսումնասիրել ցեղասպանության մասին Կոնվենցիայի նախագիծ կազմելու հարցը: Այս առաջարկն արվեց ԽՍՀՄ ներկայացուցչի կողմից՝ ելնելով այն կանխադրությից, որ ռասայական, ազգային և կրոնական խմբերի պաշտպանության հարցերը գտնվում են ՄԱԿ-ի այդ ենթակառույցի իրավասության շրջանակներում:

Բանաձևի ընդունումից հետո Տնտեսական և սոցիալական հարցերով խորհուրդը Կոնվենցիայի տեքստի կազմման աշխատանքների մեջ ներգրավեց միջազգային իրավունքի հայտնի մասնագետների, որոնք նախապես լուրջ ուսումնասիրություններ էին կատարել այդ ուղղությամբ: Առ այդ՝ Կոնվենցիայի նախագծի մշակման աշխատանքներում ներգրավվեցին միջազգային իրավունքի երեք հեղինակավոր մասնագետներ՝ ազգությամբ հրեա պրոֆեսոր **Ռաֆայել Լեմկինը**, ռումինացի **Վեսպասիան Պելլան** և ֆրանսիացի պրոֆեսոր **Դոնադյե դե Վաբրին**, որոնք փաստորեն դարձան Կոնվենցիայի հիմնադիր-հայրերը: Նրանց ընտրությունը բոլորովին էլ պատահական չէր, քանզի թվարկված անձինք մինչ այդ երկար տարիներ հետազոտություններ էին կատարել միջազգային քրեական իրավունքի բնագավառում և նրանց տեսական գիտելիքները կարող էին չափազանց օգտակար լինել միջազգային քրեական հանցագործություն համարվող ցեղասպանության վերաբերյալ կոնվենցիա ստեղծելու գործում:

Միջազգային իրավունքի ֆրանսիացի պրոֆեսոր Դոնադյե դե Վաբրին միջազգային հանցագործությունների համար պետությունների քրեական պատասխանատվության հայեցակարգի հայտնի պաշտպաններից էր և գտնում էր, որ միջազգային իրավախախտումների կանխարգելման գրավականը իրավախախտ պետության նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու սպառնալիքն է: Նրա կարծիքով՝ պետությունների քրեական պատասխանատվության իրազորման պայմանը պետք է լինի միջազգային կազմակերպության (Ազգերի լիգա) տրամադրության տակ իրական ուժի առկայությունը: Դե Վաբրին դեռևս 1924 թ. հանդես էր եկել նաև միջազգային քրեական դատարանի ստեղծման առաջարկով:

Ռումինացի իրավաբան, միջազգայնագետ Վեսպասիան Պելլային հիրավի կարելի է համարել միջազգային իրավունքում քրեական պատասխանատվության ճանաչման ուղղության հիմնադիրը: Նա 1925 թ. գրել էր իր «Պետությունների կոլեկտիվ պատասխանատվությունը և ապագայի քրեական իրավունքը» աշխատությունը, որտեղ պետությունն անվանում էր «իրավունքի գործող սուբյեկտ», որը չի կարող խույս տալ այն օրենքի պահանջներից, որոնք ներկայացվում են առանձին անձանց և չի կարող կատարել այն հանցագործությունները, որոնցում մեղադրում է վերջիններիս⁵: Հեղինակն ընդգծում էր, որ պետությունը կյանքի է կոչում ազգի կամքը և եթե վերջինս հանցագործություն է կատարում, ապա պատասխանատվությունն ընկնում է ամբողջ պետության և համապատասխանաբար

4 Տե՛ս **Дадрян В.**, Геноцид армян как проблема международного уголовного права, «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», Եր., 2006, N 13, էջ 5:

5 Տե՛ս **Ромашкин П.С.** Преступления против мира и человечества, М., 1967, с. 169.

նան՝ ազգի վրա:

1933 թ. Պալերմոյում կայացած քրեական իրավունքի միջազգային վեհաժողովում Վեսպասիան Պելլան հանդես եկավ զեկույցով, առաջարկելով անպաշտպան բնակչության, քաղաքացիների խմբերի կամ համայնքի դեմ ուղղված հարձակումները և բարբարոսական գործողությունները որակել որպես հանցագործություն, որը ենթակա է միջազգային տրիբունալի ընդդատության⁶:

Միջազգային քրեական իրավունքի մասնագետների շարքում առանձնանում էր պրոֆեսոր Ռ. Լեմկինը, որը մյուսների համեմատ ավելի շատ էր մասնագիտացել այդ ոլորտի կոնկրետ հանցագործությունների քննության ասպարեզում: Հրեական Հոլոքոսթից դեռ տարիներ առաջ՝ 1933 թ. Մադրիդում կայացած միջազգային քրեական իրավունքի կանոնակարգման կոնֆերանսին ներկայացրած իր զեկույցում Լեմկինը նկարագրում էր մի «անանուն հանցագործություն», որի տակ նկատի ուներ գլխավորապես այն, ինչը հայտնի էր որպես «հայկական կոտորածներ»⁷: Մադրիդյան զեկույցում պրոֆեսորը «անանուն հանցագործության» դրսևորում էր համարում նաև մշակութային վանդալիզմը: Չեկույցի վերջում Լեմկինն առաջարկում էր ընդունել հատուկ միջազգային կոնվենցիա՝ տվյալ հանցագործությունը կանխարգելելու և պատժելու համար:

1944 թ. լույս տեսած «Առանցքի երկրների կողմից օկուպացված Եվրոպայում հաստատված իրավակարգը» աշխատության մեջ Ռ. Լեմկինը 1933 թ. ներկայացրած իր նախորդ հայեցակարգի համեմատ զգալիորեն կրճատեց ցեղասպանության հանցագործության օբյեկտների շրջանակը՝ ռասայական, էթնիկ, կրոնական կամ սոցիալական խմբեր հասկացությունները սահմանափակելով միայն «ազգային կամ էթնիկ» խմբերով: Սակայն 1946 թ. Նյուրնբերգյան դատավարության ընթացքում, որին նա մասնակցում էր իբրև ամերիկյան կողմի մեղադրողի խորհրդատուներից մեկը, Ռ. Լեմկինը կրկին վերադարձավ իր նախորդ տեսակետին և առաջարկեց ապագա կոնվենցիայում ցեղասպանության հանցագործության օբյեկտներ դիտել ոչ միայն «ազգերը կամ էթնիկ խմբերը», այլև «բնակչության առանձին շերտերը կամ զանգվածները»⁸:

1935 թ. Վ.Պելլան, զարգացնելով Ռ. Լեմկինի նախաձեռնությունը, ներկայացրեց միջազգային հանցագործությունների համար պատասխանատվություն սահմանող փաստաթղթի նախագիծ, առաջարկելով նաև ստեղծել միջազգային դատարան, որը կվերականգներ մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանությունը՝ պետությունների կողմից իրականացվող հանցագործություններից⁹: Իր կազմած «Միջազգային քրեական օրենսգրքի հիմնադրույթների» 3-րդ հոդվածում Պելլան նշում էր, որ բացի պետությունների պատասխանատվությունից, առկա է նաև ֆիզիկական անձանց պատասխանատվություն այն գործողությունների համար, որոնցով խախտվում է միջազգային հանրային կարգը կամ միջազգային իրավունքը: Նա փաստորեն առաջ էր մղում ֆիզիկական անձանց և պետությունների զուգահեռ պատասխանատվության գաղափարը, քանզի միջազգային հանցագործության համար դրանցից յուրաքանչյուրը պետք է պատասխան տա իր մասով: Ֆիզիկական անձինք պետության թիկունքում չեն կարող թաքնվել պա-

6 Տե՛ս **Оганян П.**, Геноцид армянского народа и защита прав человека, Ер., 2004, с. 28.

7 **Յովհաննիսյան Ն.**, Հայոց ցեղասպանությունը ցեղասպանագիտության հայեցակարգային համակարգում, Եր., 2002, էջ 11:

8 **Андрюхин М. И.**, Геноцид — тяжчайшее преступление против человечества, М., 1961, с. 90.

9 Տե՛ս **Ромашкин П.С.**, Преступления против мира и человечества, с. 172.

տասխանատվությունից, իսկ պետությունն էլ չպետք է պետական հանցանքի համար «քավության նոխագ» դարձնի լոկ պետական այրերին՝ նրանց հանձնելով արդարադատության և խուսափելով սեփական պատասխանատվությունից:

Կոմվենցիայի մասնագետ-հեղինակները փաստաթղթի նախագծի վրա աշխատեցին շուրջ կես տարի, և 1947 թ. հուլիսի 7-ին ՄԱԿ-ի քարտուղարությունը ցեղասպանության մասին Կոմվենցիայի նախագիծն ուղարկեց կազմակերպության բոլոր անդամ-պետություններին, խնդրելով ներկայացնել առաջարկներ այդ փաստաթղթի վերաբերյալ: Պետությունները, սակայն, չէին շտապում ուղարկել իրենց առաջարկություններն ու դիտողությունները, ինչը ստիպեց ՄԱԿ-ի ղեկավարությանը կրկին անդրադառնալ այդ հարցին: 1947 թ. նոյեմբերի 21-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան ընդունեց 180 (II) բանաձևը, որով վերահաստատվում էր 1946 թ. դեկտեմբերի 11-ի 96 (I) բանաձևը: Նոր բանաձևում ընդգծվում էր, որ ՄԱԿ-ի անդամ-պետությունների ճնշող մեծամասնությունը դեռևս չի ներկայացրել իր մտտեցումները ցեղասպանության Կոմվենցիայի նախագծի վերաբերյալ, որը հանձնվել է քարտուղարությանը և Գլխավոր քարտուղարի կողմից 1947թ. հուլիսի 7-ին ուղարկվել կառավարություններին: Ելնելով հարցի հրատապությունից, Գլխավոր ասամբլեան հանձնարարում էր ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական հարցերով խորհրդին այլևս չսպասել ստացվող առաջարկներին և եղածների հիման վրա կազմել Կոմվենցիայի վերջնական տեքստի նախագիծը՝ այն Գլխավոր ասամբլեայի հերթական, երրորդ նստաշրջանին ներկայացնելու համար¹⁰:

Հատկանշական է, որ 1947 թ. նոյեմբերի 21-ին Գլխավոր ասամբլեան ընդունել է նաև 177 (II) բանաձևը, որով որոշվում էր ստեղծել ՄԱԿ-ին կից միջազգային իրավունքի հանձնաժողով, որը պետք է զբաղվեր Նյուրնբերգյան տրիբունալի կանոնադրության և նրա կողմից ընդունված որոշումների ու սկզբունքների հիման վրա միջազգային իրավունքի նորմերի կատարելագործման խնդրով: Բացի այդ, հանձնաժողովին հանձնարարվում էր զբաղվել նաև «Խաղաղության և մարդկության անվտանգության դեմ կատարված հանցագործությունների օրենսգրքի» նախագծի ստեղծման աշխատանքներով, որոնք պետք է հիմնվեին վերոնշյալ սկզբունքների վրա¹¹: Երկու բանաձևերի նույն օրն ընդունվելը բոլորովին էլ պատահական չէր, քանզի ցեղասպանությունն այն հանցագործությունն է, որն ուղղված է մարդկության դեմ և հետևաբար պետք է տեղ գրավեր նշված օրենսգրքում թվարկվող հանցագործությունների շարքում: Բնական է, որ բուն ցեղասպանության Կոմվենցիային վերաբերող բանաձևում Գլխավոր ասամբլեան առաջարկում էր Տնտեսական և սոցիալական խորհրդին Կոմվենցիայի նախագիծը մշակելիս հաշվի առնել 177 (II) բանաձևը, այսինքն՝ այն իրողությունը, որ ստեղծվել է նեղ մասնագիտացված մարմին, որը զբաղվելու է բոլոր այն հարցերով, որոնք քննարկվում են ցեղասպանության մասին Կոմվենցիայում: Կարելի է ենթադրել, որ այս հանգամանքը որոշակիորեն թուլացրեց բոլոր կողմերի զգոնությունը, քանզի ենթադրվում էր, որ հնարավոր թերությունները հետագայում կշտկվեն ՄԱԿ-ի միջազգային իրավունքի հանձնաժողովի կողմից:

Չնայած հարցի կարևորությանը, նախագծի տեքստի քննարկումը հետաձգվեց ևս կես տարով: Չզձգումների պատճառը թերևս պետք է տեսնել նրանում, որ

10 Տե՛ս Официальный отчет Второй сессии Генеральной Ассамблеи. Резолюции 16 сентября – 29 ноября 1947г. 123-е Пленарное заседание 21 ноября 1947 года, Лейк-Соксес, Нью-Йорк, ООН, с. 72.

11 Տե՛ս նույն տեղում, էջ 62:

ԱՄՆ-ն ընդհանրապես դեմ էր ցեղասպանության վերաբերյալ առանձին կոնվենցիա ընդունելուն: ԱՄՆ-ի պատվիրակությունն առաջարկում էր ցեղասպանության պատժելիության հարցը լուծել ոչ թե առանձին կոնվենցիայի ստեղծման ճանապարհով, այլ արդեն իսկ գոյություն ունեցող միջազգային իրավական նորմերի կողմնափոխման միջոցով՝ հարցը փոխանցելով ՄԱԿ-ի միջազգային իրավունքի զարգացման հանձնաժողովին: Այս առաջարկով ԱՄՆ-ը փաստորեն ընդգծում էր, որ այդ պահի դրությամբ տվյալ հանցագործության հետ կապված արդեն իսկ մշակված են համապատասխան միջազգային իրավական նորմեր, որոնք հարկավոր է կողմնափոխել և այդ կերպ լուծում տալ հարցին: Սակայն պետք է նշել, որ այս դեպքում կողմնափոխության գործընթացը բավական երկար ժամանակ կպահանջեր, մյուս կողմից էլ Կոնվենցիայի ընդունումով կողմնափոխության փաստորեն կիրականացվել ավելի արագ, քանզի տվյալ փաստաթղթի տեքստում ամրագրվելու էին արդեն իսկ միջազգային իրավունքում եղած նորմերը:

Չնայած ԱՄՆ-ի այդ հակադրությանը, ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական հարցերով խորհուրդը 1948 թ. ապրիլին հաստատեց փաստաթղթի մշակման հատուկ հանձնաժողովի կազմը, որում ներկայացված էին շահագրգիռ պետությունների ներկայացուցիչները, իսկ օգոստոսի 26-ին բուռն քննարկումներից հետո Կոնվենցիայի վերջնական տեքստը փոխանցեց Գլխավոր ասամբլեային:

Կոնվենցիայի տեքստի շուրջ բանավեճերն սկսվեցին ցեղասպանություն հանցագործության սահմանումից սկսած: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի կողմից անդամ-պետություններին ներկայացված մասնագետ-հեղինակների նախնական նախագծում «ֆիզիկական ցեղասպանություն» էին համարվում խմբի անդամներին սպանելը կամ նրանց առողջությանը վնասելը՝ մարմնական վնասվածքներ հասցնելու կամ հետևյալ եղանակներով՝

ա) խմբակային ոչնչացման կամ անհատական մահապատիժներով,

բ) այնպիսի կենսապայմանների ստեղծումով, որոնք արտահայտվում են բնակարանից, սննդից, հագուստից, հիգիենայից և բժշկական սպասարկումից զրկելու, ծանր աշխատանքների հարկադրելու կամ ֆիզիկական այնպիսի ծանրաբեռնվածության ապահովման եղանակով, որոնք հանգեցնում են ուժասպառության կամ մահվան,

գ) խեղումներ հասցնելը կամ այնպիսի կենսաբանական փորձերի կատարումը, որոնք չեն հետապնդում բուժման նպատակ

դ) գոյության բոլոր միջոցներից զրկելը, ինչը դրսևորվում է ունեզրկմամբ, թալանով, աշխատանքի արգելքով, տվյալ տարածքի այլ բնակիչների համար հասանելի բնակության վայրից և կենսաապահովումից զրկելով¹²:

Դժվար չէ նկատել, որ Ռ.Լեմկինի, Գ. դե Վաբրի և Վ.Պելլայի կողմից մշակված «ֆիզիկական ցեղասպանություն» դրույթը հստակեցնող բաղադրիչներում առկա էին բազմաթիվ հատկանիշներ, որոնք տառացիորեն համընկնում էին Հայոց ցեղասպանության հետ:

Կոնվենցիայի նախագծի քննարկումների ժամանակ հատուկ զեկուցող Ռ.Լեմկինի հետազոտության մեջ Հայոց ցեղասպանության հիշատակումը, որը ցեղասպանությունների համար հանդիսացել էր մոդել և Կոնվենցիան կատարելագործելու տեսակետից լուրջ փաստական հիմք էր տալիս, խուճապային

12 Տե՛ս **Андрюхин М. И.**, Геноцид – тяжчайшее преступление против человечества, с. 83.

դիմադրություն առաջացրեց ոչ միայն Թուրքիայի և նրա դաշնակիցների, այլև ԽՍՀՄ-ի մոտ, որոնք մոռանալով իրենց հակասությունները, համերաշխ կերպով միավորվեցին այդ հիշատակման դեմ¹³: Դա էր պատճառը, որ հետագայում ցեղասպանության օրինակները չէին կոնկրետացվում, այլ դրանց մասին խոսվում էր վերացական կարգով: Ցեղասպանության մասին Կոնվենցիայի նախապատրաստական փաստաթղթերում պարունակվում են նաև այդ գործընթացին մասնակցած Կուբայի, Եգիպտոսի, Մեծ Բրիտանիայի, Արգենտինայի ներկայացուցիչների բազում նշումներ առ այն, որ ցեղասպանությունը միջազգային իրավունքին արդեն իսկ ծանոթ հանցագործություն է, որի դեպքերը պատմությունն ի հայտ է բերել դարերի ընթացքում և որը միայն վերջերս է բնորոշվել¹⁴:

ԽՍՀՄ-ի պատվիրակությունը փորձեց վիճարկել «ֆիզիկական ցեղասպանության» կոնկրետ դրսևորումների օրինակափությունը: Մասնավորապես կասկածի տակ դրվեց ունեզրկումը, որը թալանի հետ մույն հարթության վրա էր դրվում: ԽՍՀՄ-ի ներկայացուցիչները պնդում էին, որ ունեզրկումը հաճախ հանդես է գալիս իբրև պատիժ՝ կատարված հանցագործության համար, իսկ թալանը հանցագործություն է, որը պատիժ է պահանջում: Սակայն հեղինակներն այստեղ նկատի ունեին ապօրինի ունեզրկումը, որը ցեղասպանության հանցագործությանը բնորոշ երևույթ էր և կիրառվել էր թե՛ երիտթուրքերի կողմից՝ հայերի, և թե՛ մացիստների կողմից՝ հրեաների նկատմամբ, ինչն ի վերջո հանգեցրել էր ցեղասպանության գոհերի՝ հայերի և հրեաների ոչնչացմանը: ԽՍՀՄ-ը ոչ առանց հիմքի կարծում էր, որ ունեզրկման այս դրույթը կարող է կիրառվել ինչպես իր, այնպես էլ սոցիալատական ճամբարի իր դաշնակիցների կողմից իրականացված զանգվածային ունեզրկման քաղաքականության դեմ: ԽՍՀՄ-ի պնդմամբ ֆիզիկական ցեղասպանության հատկանիշներից հանվեցին բ) և դ) կետերը, որի հետևանքով «ֆիզիկական ցեղասպանության» մի շարք կարևոր հատկանիշներ, որոնք բնութագրում էին հենց Հայոց ցեղասպանությունը, դուրս մղվեցին Կոնվենցիայի տեքստից:

Ցեղասպանության Կոնվենցիայի նախագծի մասնագետ-հեղինակները մասնատեսել էին նաև ցեղասպանության հանցագործության համար պետության պատասխանատվության դրույթը: Թվում էր՝ եթե մեզան հունով ընթանան աշխատանքները, Կոնվենցիայում ամրագրվելու են թե՛ պետությունների և թե՛ ֆիզիկական անձանց պատասխանատվության նորմերը: Սակայն Կոնվենցիայի տեքստի մշակման հետագա աշխատանքներին միջամտեցին ՄԱԿ-ի անդամ-պետությունների ներկայացուցիչները: **Եվ զարմանալիորեն, ԱՄՆ-ն ու ԽՍՀՄ-ը, որոնք իրենց դաշնակիցներով համառորեն հակադրվում էին մեկը մյուսի առաջարկներին, միասնաբար հանդես եկան Կոնվենցիայի հեղինակ-մասնագետների նախագծի այն դրույթների դեմ, որոնք նախատեսում էին պետությունների պատասխանատվության տարրեր՝ ցեղասպանության հանցագործության համար:** Նրանց միասնական հակադեցուքության հետևանքով պետությունների պատասխանատվության դրույթները գրեթե ամբողջությամբ չեզոքացվեցին, բացառությամբ Կոնվենցիայի IX հոդվածում պետությունների պատասխանատվության մասին

13 Տե՛ս **Барсегов Ю. Г.**, Ответственность государства за геноцид в международном праве и международной политике. «Геноцид – преступление против человечества. Материалы I Московского международного симпозиума», М., 1997, с. 94.

14 Տե՛ս **Վարդանյան Վ.**, Հայերի դեմ իրագործած ցեղասպանության համար Թուրքիայի Հանրապետության միջազգային իրավական պատասխանատվության հիմքերը, եղանակները, ձևերը և տեսակները, «Ցեղասպանություն և միջազգային իրավական պատասխանատվություն»։ «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի տեղեկագիր, Եր., 2006, N 1(17), էջ 20:

անդրոշ ձևակերպման: Սա թերևս միակ հարցն էր, որի շուրջ ԱՄՆ-ի, ԽՍՀՄ-ի ու նրանց դաշնակիցների տեսակետները համընկան. մյուս բոլոր հարցերում նրանք ունեցան հակադիր մոտեցումներ:

2. ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի հակամարտությունը ցեղասպանության մասին կոնվենցիայի շուրջ

Պետք է նշել, որ Կոնվենցիայի ընդունման գործընթացի հենց սկզբնական փուլից ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի ու նրանց դաշնակիցների միջև իսկական հակամարտություն սկսվեց, ինչի հետևանքով կողմերը տրամագծորեն հակադիր տեսակետներ էին արտահայտում գրեթե բոլոր սկզբունքային հարցերի շուրջ: Պայքարն ընթանում էր հետևյալ փոխբացառող տրամաբանության շրջագծում. յուրաքանչ-յուրը ձգտում է Կոնվենցիան դարձնել զենք ու միջոց՝ հակառակորդի վրա ներազդելու համար: Ուստի ցանկացած հոդվածի ընդունմանը նախորդում էր համառ բանավեճը, որի ընթացքում բախվում էին կողմերի ներկայացրած իրավական փաստարկներն ու հիմնավորումները:

ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև տարածայնությունները սկսվեցին 1946 թ. դեկտեմբերի 11-ի 96(1) բանաձևի ընդունումից անմիջապես հետո: Բանն այն է, որ Կոնվենցիայի մշակման սկիզբն ազդարարող այս փաստաթղթում ցեղասպանության սահմանումը տարածվում էր ոչ միայն ազգային ու ռասայական, այլև քաղաքական խմբերի վրա, ինչին բացարձակապես դեմ էր ԽՍՀՄ-ը: Վերջինս արդեն սկսել էր սոցիալիստական ճամբարի «շինարարություն» Արևելյան Եվրոպայի երկրներում: Նրանցում սկիզբ էր առել կոմունիստական կուսակցությունների միանձնյա իշխանության հաստատման գործընթացը, որի արդյունքում բոլոր այլընտրանքային ուժերը ոչ միայն հեռացվում էին իշխանության ղեկից, այլև ենթարկվում էին հետապնդումների՝ ֆաշիստական ռեժիմի հետ համագործակցելու շինծու մեղադրանքներով: Նույն պատրվակով ԽՍՀՄ-ում հետապնդումների էին ենթարկվում հազարավոր այլախոհներ, որոնց նույնպես կեղծ մեղադրանքներով լավագույն դեպքում աքսորում էին Սիբիր: Ելնելով այս իրողություններից՝ ԽՍՀՄ-ը ոչ առանց հիմքի կարծում էր, որ ԱՄՆ-ը և նրա դաշնակիցները Կոնվենցիայում ամրագրելով ցեղասպանության սահմանումը քաղաքական խմբերի վրա տարածող դրույթը՝ հնարավորություն կստանան սոցիալիստական ճամբարի երկրներին, նախևառաջ՝ ԽՍՀՄ-ին մեղադրել վերջիններիս նկատմամբ ցեղասպանություն իրականացնելու մեջ: Ավելին, Արևմուտքի տերությունները, առաջ անցնելով, ձգտում էին անգամ նման հանցագործությունների հետ կապված ամրագրել «հումանիտար ինտերվենցիայի» իրավունքը, ինչը թույլ կտար հանցագործությունը կանխելու պատրվակով միջամտել սուվերեն երկրների ներքին գործերին, ճիշտ այնպես, ինչպես դա բազմիցս գործադրվել էր մինչ Առաջին աշխարհամարտը՝ Օսմանյան կայսրության նկատմամբ: ԱՄՆ-ը և նրա դաշնակիցները կարողացան այս դրույթը ամրագրել ցեղասպանության Կոնվենցիային ծնունդ տված 1946 թ. դեկտեմբերի 11-ի բանաձևում, սակայն պարզ էր, որ ԽՍՀՄ-ն ու նրա դաշնակիցները չէին կարող նման բան թույլ տալ:

Հատկանշական է սակայն, որ քաղաքական շարժառիթներով իրականացվող ցեղասպանության կամ քաղաքական խմբերի նկատմամբ կատարվող ցեղաս-

պանության մասին դրույթը, այլ խոսքով՝ «պոլիտիցիոլը» չամրագրվեց Կոնվենցիայում ո՛չ միայն ԽՍՀՄ-ի ու նրա դաշնակիցների հակազդեցության պատճառով: ԱՄՆ-ը և նրա դաշնակիցները տվյալ պահին Գլխավոր ասամբլեայում ունեին ձայների մեծամասնություն և ցանկության դեպքում կարող էին անցկացնել տվյալ դրույթը: Ուղղակի վերջին պահին ԱՄՆ-ի պատվիրակությունը չպնդեց նշված դրույթի ամրագրման վրա: Առաջին հայացքից տարօրինակ թվացող այս վարքագիծն ուներ իր բացատրությունը: Եթե 1946-1947 թթ. ԱՄՆ-ի պատվիրակությունը միանշանակորեն պնդում էր տվյալ դրույթի արձանագրման վրա, ապա 1948 թ. կեսերի դրությամբ Արևելյան Եվրոպայի երկրներում ԽՍՀՄ-ի օգնությամբ արդեն գրեթե ավարտվել էր կոմունիստական միահեծան իշխանությունների հաստատման գործընթացը, և այդ երկրներում արդեն, ըստ էության, չկային այլընտրանքային ուժեր, որոնց ԱՄՆ-ը և նրա կողմնակիցները կկարողանային «սատարել» Կոնվենցիայի տվյալ դրույթի միջոցով: Մյուս կողմից էլ ԱՄՆ-ում 1948 թ. սկսվել էր «վիուկների որսը» կոմունիստական կամ սոցիալիստական ուժերի դեմ: Ելնելով ստեղծված իրավիճակից, ամերիկյան պատվիրակությունը իրավագիտորեն սկսեց կարծել, որ «պոլիտիցիոլի» ամրագրումը ԱՄՆ-ի համար կարող է ունենալ «բումբերանգի էֆեկտ» և արդեն սոցիալիստական ճամբարի երկրները, առաջին հերթին՝ ԽՍՀՄ-ը իրեն կմեղադրեն «դեմոկրատական քաղաքական խմբերի» նկատմամբ ցեղասպանություն իրականացնելու մեջ: Ուստի որոշում ընդունվեց հրաժարվել ի սկզբանե այդքան համառորեն պաշտպանվող «պոլիտիցիոլի» արձանագրումից: Ուստի երբ հանձնաժողովի նիստերից մեկի ընթացքում Վենեսուելայի, իսկ այնուհետև Ուրուգվայի, Եգիպտոսի ու Իրանի ներկայացուցիչները հանդես եկան Կոնվենցիայի տեքստից «քաղաքական խմբեր» արտահայտությունը դուրս հանելու առաջարկով, ամերիկյան պատվիրակը նույնպես պաշտպանեց նրանց առաջարկը¹⁵: **Այսպիսով, ցեղասպանություն հանցագործության բաղադրիչ, որոշ առումով՝ նաև այդ հանցագործության տեսակ համարվող «պոլիտիցիոլ» եզրը տեղ չգտավ Կոնվենցիայի տեքստում, ինչը, կարծում ենք, տվյալ փաստաթղթի թերություններից մեկն է հանդիսանում:**

ԽՍՀՄ-ի վերջնական դիրքորոշումները հայտնի դարձան 1948 թ. ապրիլին, երբ խորհրդային պատվիրակությունը տարածեց «Ցեղասպանության դեմ պայքարի կոնվենցիայի հիմնադրույթներ» փաստաթուղթը, որը ներկայացվել էր դեռևս հատուկ հանձնաժողովին: Փաստաթղթում, ի հակադրություն «պոլիտիցիոլի», առաջ էին քաշվում միանգամից երկու կարևոր դրույթներ՝ ցեղասպանության քարոզչության համար պատասխանատվություն սահմանելը և ռասայական, ազգային ու կրոնական թշնամանք սերմանող կազմակերպությունների գործունեության արգելման պահանջը: ԽՍՀՄ-ն առաջարկում էր Կոնվենցիայի մեջ հատուկ հոդված նախատեսել, որով քրեական պատասխանատվություն կսահմանվեր ցեղասպանության քարոզչության, այսինքն՝ ազգային ու ռասայական թշնամանք սերմանելու, ռասիստական գաղափարներ տարածելու համար, որոնք նպատակ են հետապնդում արդարացնել մեկ ազգի գերիշխանությունը մյուսի նկատմամբ: ԽՍՀՄ-ի առաջարկը հիմնավորվում էր նրանով, որ 1947 թ. նոյեմբերի 3-ին ՄԱԿ-ն արդեն բանաձև էր ընդունել, որով արգելվում էր պատերազմի քարոզչությունը: Իսկ ցեղասպանությունն այնպիսի հանցագործություն է, որը հաճախ ուղեկցում է ագրեսիվ պատերազմին: Սակայն ԱՄՆ-ը և նրա դաշնակիցները

15Տե՛ս Андриухин М. И., Геноцид – тягчайшее преступление против человечества, с. 93.

ընդդիմացան այս առաջարկին այն հիմնավորմամբ, որ մնան հողվածի արձանագրումը կնշանակի ոտնձգություն կատարել դեմոկրատական այնպիսի սկզբունքների նկատմամբ, ինչպիսիք են խոսքի և մամուլի ազատությունը: Անշուշտ, այս հիմնավորումը բացարձակապես տեղին չէր, քանզի բոլոր երկրներն էլ իրենց օրենսդրություններում սահմանափակում են խոսքի և մամուլի ազատությունը, երբ խոսքը վերաբերում է հասարակական կամ պետական անվտանգությանը կամ եթե ապացուցվում է, որ արտահայտված միտքը խախտում է այլոց իրավունքները: Այնուհանդերձ, որ ցեղասպանության քարոզչությունը հանդիսանում է այլոց ապրելու իրավունքի խախտման ուղղակի նախադրյալը: Ամերիկյան տեսակետը, սակայն, պաշտպանեցին Ֆրանսիայի, Լիբանանի և Վենեսուելայի ներկայացուցիչները, որոնք պնդեցին, թե Կոնվենցիայում ցեղասպանության քարոզչության համար հատուկ կետ մտցնելու անհրաժեշտություն չկա, քանի որ նրանում արդեն պատասխանատվություն է նախատեսված՝ ցեղասպանություն սադրելու համար¹⁶: Այստեղ միտումնավոր կերպով փորձ էր արվում նույնականացնել «սադրել» և «քարոզել» հասկացությունները: **Ի տարբերություն սադրելու, քարոզելը ավելի ընդարձակ հասկացություն է և իր մեջ կարող է ներառել նաև ավելի կոնկրետ հասկացության՝ սադրանքի դրսևորումները: Ավելին՝ «քարոզել» հասկացությունը իր մեջ ներառում է ոչ միայն կոնկրետ գործողության կոչը, այլև դրա գաղափարական հիմնավորումը:** Քարոզչությունը, որը հիմնվում է ռասայական գաղափարախոսության վրա, այլապես ասած՝ է սերմանում մի հանրության մեջ՝ դրդելով նրան մեկ այլ ռասայական, ազգային ու կրոնական խմբի նկատմամբ բռնության գործողությունների, ընդուսով՝ զանգվածային սպանությունների: Այս դրության ամրագրումը Կոնվենցիայում չափազանց կարևոր նշանակություն կարող էր ունենալ ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու առումով: Նման դրությամբ կարևոր էր նաև տեղի ունեցած փաստի՝ Հայոց ցեղասպանության դատապարտման առումով, որի հիմքում ընկած էր երիտթուրքերի քարոզած պանթուրքիզմը՝ բոլոր ոչ թուրք խմբերի դեմ ուղղված ռասայական գաղափարախոսությունը: Ցավով պետք է արձանագրել, որ **ցեղասպանություն քարոզելու արգելքի մասին դրույթը ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների հակադեմոկրատիայի պատճառով տեղ չգտավ Կոնվենցիայի տեքստում, ինչը նույնպես պետք է համարել փաստաթղթի թերությունը:**

Ցեղասպանության քարոզչության համար պատասխանատվությունից բացի, ԽՍՀՄ-ի նախագծում առկա էր նաև ռասայական, ազգային ու կրոնական թշնամանք տարածող կազմակերպությունների գործունեության արգելման դրույթը: Եվ կրկին մնան դրույթի դեմ դուրս եկան ԱՄՆ-ն ու նրա դաշնակիցներն այն հիմնավորմամբ, որ իբր թե՝ դա հակասում է շատ երկրների սահմանադրություններում ամրագրված ազատություններին: Սակայն, թերևս նույն ԱՄՆ-ի ներկայացուցիչներն էլ էին գիտակցում իրենց փաստարկի անհիմն լինելը, պարզապես, ստեղծված իրավիճակում հակադիր բեռները խնդիր էին դրել տասպալել հակառակ կողմի ցանկացած առաջարկ, քանզի մտավախություն կար, որ այն առաջադրվում է մյուս կողմին վնաս հասցնելու նպատակով: Մասնավորապես մտավախություն կար, որ ԱՄՆ-ում գործող «Կու-կլուքս-կլանի» կարգի կազմակերպությունները կարող էին հիմք ծառայել ԽՍՀՄ-ի կողմից մնան մեղադրանքներ ներկայացնելու համար: Հատկանշական է, որ ԽՍՀՄ-ի առաջարկված այս դրույթները հիմնվում

16 Տե՛ս **Андрюхин М. И.**, Геноцид – тягчайшее преступление против человечества, с. 97.

էին թե՛ Պոտսդամի կոնֆերանսում հակահիտլերյան կոալիցիայի երկրների միջև ձեռք բերված պայմանավորվածությունների և թե՛ Նյուրնբերգյան դատավարության դատավճիռների վրա, որոնցով արգելվում էր նացիզմի գաղափարախոսությունը և մի շարք նացիստական կազմակերպությունների գործունեությունը: ԽՍՀՄ-ն այսպիսով փորձում էր ընդգծել նշված իրադարձությունների ու Կոնվենցիայի միջև առկա պատճառահետևանքային կապը, սակայն այդ կարճ ժամանակամիջոցում արդեն փոխվել էին աշխարհաքաղաքական իրողությունները, և ԱՄՆ-ն ու նրա դաշնակիցներն այլևս իրենց պարտավորված չէին համարում Պոտսդամի ու Նյուրնբերգի որոշումներով և չէին էլ ցանկանում հիշել նրանց մասին, առավել ևս՝ թույլ տալ դրանց հիշատակումը Կոնվենցիայի տեքստում: **Կոնվենցիայում ռասայական, ազգային ու կրոնական թշնամանք տարածող կազմակերպությունների գործունեության արգելման դրույթի բացակայությունը պետք է դիտել փաստաթղթի լուրջ թերություններից մեկը, մանավանդ՝ Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման համատեքստում:**

ԽՍՀՄ-ի առաջարկներից կարելի է մատնանշել նաև ազգային օրենսդրություններում ցեղասպանության քարոզչության համար պատասխանատվության նորմի ամրագրման դրույթը, որի համաձայն՝ անդամ պետությունները պարտավորվելու էին քրեական պատասխանատվություն սահմանել ցեղասպանության քարոզչության և ռասայական, ազգային ու կրոնական թշնամանք տարածելու համար: ԱՄՆ-ը և նրա դաշնակիցները քայլեր ձեռնարկեցին, այդ դրույթը եթե ոչ չեզոքացնելու, ապա գոնե՝ մեղմելու համար: Հակափաստարկ էր բերվում, թե իբր՝ ցեղասպանության հանցակազմի գործողություններից, օրինակ՝ սպանությունը դատապարտելի է բոլոր պետությունների քրեական օրենսդրություններում, ուստի հարկ չկա Կոնվենցիայով մասն պարտավորություն դնել անդամ-պետությունների վրա: Ի պատասխան դրան՝ ԽՍՀՄ-ի ներկայացուցիչը հիշեցրեց, որ ցեղասպանություն հանցագործությունը չի սահմանափակվում միայն սպանությամբ և իր հանցակազմում պարունակում է նաև սպեցիֆիկ գործողություններ: Երկար բանավեճերից հետո խորհրդային առաջարկից դուրս մղվեց ռասայական, ազգային ու կրոնական թշնամանք տարածելու համար պատասխանատվություն սահմանելու դրույթը, իսկ 5-րդ հոդվածը ստացավ ավելի մեղմ և անորոշ ձևակերպում: Հոդվածում խոսվում է միայն պատժի և ոչ թե կանխարգելման միջոցների մասին, քանզի կանխարգելող դրույթները դուրս մղվեցին Կոնվենցիայի տեքստից: Այդուհանդերձ, չնայած իր թերություններին, 5-րդ հոդվածի ամրագրումը Կոնվենցիայի վերջնական տեքստում պետք է համարել առաջընթաց քայլ, քանզի պետությունները, այդ թվում՝ Թուրքիան, թեկուզ անորոշ, բայց պարտավորություն էին ստանձնում համապատասխան փոփոխություններ կատարել իրենց օրենսդրություններում, որոնցով կնախատեսվեն ցեղասպանության կամ կոնվենցիայի III հոդվածում նշված հանցագործությունների մեջ մեղավոր անձանց պատժելու արդյունավետ միջոցներ¹⁷:

Ինչ վերաբերում է ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների առաջարկություններին, ապա դրանցից պետք է առանձնացնել ցեղասպանության գործերով իրավասության հիմնախնդիրները: Մասնավորապես առաջ էր քաշվում իրավասու Միջազգային դատարան ստեղծելու գաղափարը, որին էլ Կոնվենցիայի կողմերը պարտավոր էին հանձնել ցեղասպանության մեջ մեղավոր անձանց, եթե

17 Sեւ Международное право в документах, сост. сборника Н.Т. Блатова, М., 1982, с. 336.

ցեղասպանական գործողությունները կատարվել են նրանց կողմից, ովքեր գործել են իբրև պետական մարմինների ներկայացուցիչներ, կամ եթե պետությունն աջակցել է վերջիններիս և միջոցներ չի ձեռնարկել նրանց դեմ:

Պետք է նշել, որ Միջազգային դատարանին ցեղասպանության գործերը փոխանցելու մասին դրույթը չափազանց կարևոր է այն իմաստով, որ նրանում անուղղակիորեն մատնանշվում է նաև պետության մեղսակցության ու պատասխանատվության պահը: Կոնվենցիայի նախնական նախագծում անհնար էր համարվում ցեղասպանության գործի քննությունը միջազգային դատարանից բացի որևէ այլ դատական աստիճանում՝ այն դեպքերում, երբ ցեղասպանության մեջ մեղադրվող անձը գործել է պետական մարմնի անունից, եթե պետությունը աջակցել է նման գործողություններին կամ չի ձեռնարկել միջոցներ այդ գործողությունների դեմ: Այսինքն՝ ցեղասպանության ընթացքում պետության գործողությունն ու անգործությունը բավարար հիմք է, որ տվյալ պետությունը գրկվի հանցագործության մեջ մեղադրվող անձին դատելու իրավունքից: Բնական է, որ տվյալ պարագայում կոնկրետ պետությունը, շահագրգռվածություն ունենալով, չի կարող իրականացնել օբյեկտիվ դատաքննություն և արժանի պատիժ սահմանել մեղադրյալի համար:

Սակայն այս դրույթին դեմ դուրս եկան ԽՍՀՄ-ն ու նրա դաշնակիցները, որոնք գտնում էին, որ դժվար է պատկերացնել, թե որևէ պետություն, որի մարմինները կամ պետական պաշտոնյաները մեղավոր են ցեղասպանության մեջ, նրանց կհանձնի միջազգային դատարանին, քանզի դա կնշանակի տվյալ պետության ինքնամեղադրում: Իսկ եթե մի պետությունը մեղադրում է մեկ այլ պետության՝ ցեղասպանություն իրականացնելու մեջ, ապա այդ դեպքում գործը պետք է քննի ոչ թե միջազգային տրիբունալը, այլ ՄԱԿ-ի իրավասու մարմինը՝ Անվտանգության խորհուրդը, որի վրա է դրված միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման ու վերականգնման գլխավոր պատասխանատվությունը: Այսպիսով, ԽՍՀՄ-ը բացարձակապես դեմ էր Միջազգային դատարանի ստեղծման գաղափարին՝ գտնելով, որ այդ դատարանի վճիռները ոչ այլ ինչ են, քան միջամտություն պետությունների ներքին գործերին և նրանց ինքնիշխանության ոտնահարում: Սակայն ԽՍՀՄ-ն անտեսում էր այն պարզ իրողությունը, որ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը դատական աստիճան չէ, որպեսզի իրավական գնահատական տա պետությունների գործողություններին, ու մինչև որոշակի միջոցներ ձեռնարկելը, նրան անհրաժեշտ է իրավասու միջազգային դատական ատյանի, տվյալ դեպքում՝ Արդարադատության միջազգային դատարանի որոշումը:

Այնուամենայնիվ, ԽՍՀՄ-ն իր նախագծում պնդում էր, որ ցեղասպանության գործերը պետք է գտնվեն այն պետության ազգային դատարանի իրավասության ներքո, որի տարածքում դրանք կատարվել են: Պետք է նշել, որ այս դրույթը բավականին սահմանափակում է ցեղասպանության մեջ մեղադրվող պետությանն իրավական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը: Բավական է հիշել միայն երիտթուրքերի դատավարության բեմականացումը Օսմանյան կայսրությունում, երբ Հայոց ցեղասպանության գլխավոր կազմակերպիչներին հաջողվեց խուսափել իրական պատասխանատվությունից, իսկ դատավարությունն էլ ընդամենը վերածվեց մի շոուի, որպեսզի ցույց տրվի աշխարհին, թե Օսմանյան կայսրությունն այլևս նախկինը չէ և շարժվում է դեմոկրատական ճանապարհով:

Հատկանշական է, որ միջազգային դատարանի ստեղծմանը դեմ էր դուրս գալիս մի երկիր՝ ԽՍՀՄ-ը, որն ինքն էր Նյուրնբերգի միջազգային դատարանի ստեղծման գլխավոր նախաձեռնողներից մեկը: Ավելորդ է նշել, որ այդ միջազգային տրիբունալը բավական արդյունավետ աշխատեց և արժանի պատիժներ սահմանեց նացիստների համար, որոնք մեղադրվում էին հրեաների և սլավոնական ժողովուրդների ցեղասպանության մեջ: Այս անգամ արդեն հերթը ԽՍՀՄ-ինն էր՝ մոռանալու համար Նյուրնբերգը և չտեսնել տալու այդ գործընթացների պատճառահետևանքային կապը:

ԽՍՀՄ-ն իր այս դիրքորոշումը փորձում էր հիմնավորել նաև նրանով, որ ցեղասպանությունը կոնկրետ հանցագործություն է՝ ուղղված ազգային կամ ռասայական խմբի դեմ, ուստի այդ հանցագործությունը պետք է քննի կոնկրետ ազգային պետությունը: Սակայն ԽՍՀՄ-ի ներկայացուցիչները անտեսում էին այն փաստը, որ տվյալ հանցագործությունը 1915 թ. մայիսի 24-ի Անտանտի տերությունների համատեղ հռչակագրի ընդունումից ի վեր համարվում էր հանցագործություն՝ ուղղված մարդկության դեմ: Հետևաբար՝ այդ կարգի հանցագործությունը այլևս չի կարող լինել ազգային դատարանի իրավասության հարց: Եթե մի պետության տարածքում իրականացվում է ազգային փոքրամասնության նկատմամբ ցեղասպանություն, ապա ակնհայտ է, որ այդ պետության դատարանը չի պատժելու մեղավորներին, քանզի, ի վերջո, այդ ցեղասպանությունը իրականացվել է կամ տվյալ պետության ուղղակի մասնակցությամբ, կամ թույլտվությամբ:

Այնուամենայնիվ, ԱՄՆ-ի ներկայացուցիչները փորձեցին մեղմել իրենց նախկին դիրքորոշումը, որպեսզի այն ընդունելի դառնա հակադիր կողմի համար: Նոր տարբերակում կողմերը բանակցությունների միջոցով կամ որևէ այլ ճանապարհով ստեղծելու էին միջազգային քրեական դատական մարմին, որն իրավասու կլիներ քննելու Կոնվենցիայի առարկա հանդիսացող իրավախախտումները: Մինչ այդ պայմանավորվող կողմերը պետք է համաձայնեին, որ Կոնվենցիայի անդամ պետությունների մեծամասնության որոշմամբ ստեղծվեն հատուկ ad hoc տրիբունալներ՝ նման բնույթի գործեր քննելու համար: Այդ տրիբունալները պետք է օժտված լինեին անհրաժեշտ լիազորություններով՝ վկաներ կանչելու, փաստաթղթեր պահանջելու, մեղադրանք ներկայացնելու, դատական քննություն անցկացնելու և դատավճիռներ կայացնելու համար համապատասխան անձանց կամ խմբերի նկատմամբ և այլն¹⁸:

Ինչպես տեսնում ենք, մոտ 50 տարի առաջ՝ 1948 թվականին, ակտուալ էր ad hoc դատարանի գաղափարը, որը հետագայում իրականություն դարձավ 1993 թ. Ռուանդայի և 1994 թ. նախկին Հարավսլավիայի դատարանների միջոցով, որոնցից հետո միայն 1998 թ. Հռոմում ընդունվեց Միջազգային մշտական քրեական դատարանի կանոնադրությունը: Փաստորեն, ՄԱԿ-ի ցեղասպանության մասին Կոնվենցիայի քննարկումների ժամանակ կարելի է ասել՝ կանխատեսվեց միջազգային քրեական իրավունքի հետագա զարգացման ընթացքը: Համեմատելու համար նշենք, որ ad hoc դատարանների համար ֆիքսվում էին այն լիազորությունները, որոնք ներկայումս ունեն գործող ad hoc դատարանները: Սակայն այս ձևաչափը նույնպես ընդունելի չէր ԽՍՀՄ-ի համար, և արդյունքում Կոնվենցիայի VI հոդվածում տեղ գտավ մի փոխզիջումային տարբերակ, որով ճանաչվում էր ազգային դատարանների իրավագործությունը՝ ցեղասպանության գործերով, սա-

18 Стен Андрюхин М. И., Геноцид – тягчайшее преступление против человечества, с. 105.

կայն դրա հետ մեկտեղ ընդունվում էր միջազգային տրիբունալի ստեղծման և վերջինիս իրավասության հնարավորությունը¹⁹: Այս հողվածի գործադրման, հատկապես՝ միջազգային դատարան ստեղծելու մասով այն իրագործելու համար 1948 թ. դեկտեմբերի 9-ին Գլխավոր ասամբլեան ընդունեց բանաձև, որով արդեն իսկ ընտրված ու գործող միջազգային իրավունքի հանձնաժողովին հանձնարարեց քննարկել այնպիսի միջազգային քրեական դատարանի ստեղծման անհրաժեշտության ու հնարավորության հարցը, որն իրավասու կլիներ քննելու ցեղասպանության և այլ հանցագործությունների մեջ մեղադրվող անձանց գործերը²⁰:

Լուրջ տարածայնություններ կային նաև Կոնվենցիայի հողվածների մեկնաբանության, կիրառման ու գործադրման հետ կապված: ԱՄՆ-ը և նրա դաշնակիցները առաջարկեցին այդ լիազորությունները դնել Միջազգային դատարանի վրա, ԽՍՀՄ-ն, ինչպես միշտ, դա համարեց պետությունների ներքին գործերին միջամտելու փորձ, նշելով, որ Միջազգային դատարանը պետք է նման հարցերում լիազորություն ունենա միայն բոլոր շահագրգիռ պետությունների համաձայնության դեպքում: Բարեբախտաբար, խորհրդային այս առաջարկը չընդունվեց և Կոնվենցիայի IX հողվածում ամրագրվեց, որ վեճերի դեպքում ցանկացած կողմի պահանջով հարցը հանձնվում է Միջազգային դատարանի քննությանը²¹: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ իր առաջարկությունը չընդունվեց, ԽՍՀՄ-ը 1949 թ. դեկտեմբերի 16-ին՝ Կոնվենցիան ստորագրելու ժամանակ, վերապահում կատարեց, որ իր համար պարտադիր չի համարում IX հողվածի դրույթները և հայտարարեց, որ վեճը Միջազգային դատարան կարող է հանձնվել առանձին դեպքերում՝ վիճող բոլոր կողմերի համաձայնությամբ: Նույնանման վերապահում կատարեցին նաև ՈւՍՄՀ-ն, ԲՍՄՀ-ն և Չեխոսլովակիան, իսկ ավելի ուշ՝ Կոնվենցիային միացած Բուլղարիան և Լեհաստանը²²: ԽՍՀՄ փլուզումից հետո, սակայն, նրա իրավահաջորդ Ռուսաստանի Դաշնությունը հրաժարվեց ԽՍՀՄ-ի կողմից կատարած վերապահումից, և այժմ Ռուսաստանի համար Կոնվենցիան գործում է ամբողջությամբ: Պետք է նշել, որ այս վերապահումով ԽՍՀՄ-ը ոչ միայն իրեն էր ապահովագրում Միջազգային դատարանում ցեղասպանության Կոնվենցիայի հետ կապված գլխացավանքներից, այլև մեծ նվեր էր մատուցում Թուրքիայի Հանրապետությանը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Խորհրդային Հայաստանը միջազգային իրավունքի ինքնուրույն սուբյեկտ չէր, տեսականորեն նա կարող էր Հայոց ցեղասպանության՝ Կոնվենցիային վերաբերելիության հարցով դիմել Միջազգային դատարան միայն ԽՍՀՄ-ի միջոցով, սակայն ելնելով վերջինիս վերապահումից, Թուրքիան, որն, ի դեպ, առաջիններից մեկը ստորագրեց Կոնվենցիան՝ առանց որևէ վերապահման²³, կօգտվեր իրեն ընձեռված հնարավորությունից և երբեք չէր տա իր համաձայնությունը, որ տվյալ հարցը քննվի Միջազգային դատարանում: Այսպիսով, տվյալ վերապահումով Խորհրդային Հայաստանը ընդհուպ ԽՍՀՄ-ի փլուզումը փաստորեն զրկված էր Կոնվենցիայի դրույթների հիման վրա Հայոց ցեղասպանության հարցն անգամ

19 Տե՛ս *Международное право в документах*, с. 337.

20 Տե՛ս *Официальный отчет Первой части Третьей сессии Генеральной Ассамблеи. Резолюции 21 сентября – 12 декабря 1948г., Париж, ООН*, с. 92.

21 Տե՛ս *Международное право в документах*, с. 337.

22 Տե՛ս *Андрюхин М. И., Геноцид – тягчайшее преступление против человечества*, с. 106.

23 Տե՛ս *Барсегов Ю., Турецкая доктрина международного права на службе политики геноцида (о концепции члена “комиссии примирения” Гюндюз Актана)*, М., 2002, с. 55.

Միջազգային դատարանում բարձրացնելու տեսական հնարավորությունից:

Սկզբունքային հիմնահարցերի շարքում կարելի է առանձնացնել նաև ազգային-մշակութային ցեղասպանության մասին դրույթը, որը տեղ էր գտել ԽՍՀՄ-ի նախագծում: Նրանում առաջարկվում էր առօրյա կյանքում կամ դպրոցներում մայրենի լեզվի օգտագործման, մայրենի լեզվով հրատարակության կամ տպագրված նյութերի տարածման արգելքները, գրադարանների, թանգարանների, դպրոցների, պատմական հուշարձանների, կրոնական կառույցների և այլ մշակութային օջախների ոչնչացումը և դրանցից օգտվելու արգելքը նույնպես որակել իբրև ցեղասպանություն: Ի դեպ, պետք է նշել, որ ազգային-մշակութային ցեղասպանության դրույթը լիովին համահունչ էր դեռևս 1933 թ. Ռ. Լենկինի ներկայացրած մադրիդյան գեկույցի դրույթներին և կարծես թե չպետք է հանդիպեր որևէ հակադեցության: Խորհրդային նախագծում առկա այս դրույթը պաշտպանվեց նաև Պակիստանի և մասամբ՝ Վենեսուելայի պատվիրակությունների կողմից: Վենեսուելայի ներկայացուցիչը, համաձայնելով ԽՍՀՄ-ի առաջարկի հետ, ուղղում կատարեց՝ ավելացնելով վերը նշված գործողությունների պարբերական բնույթ ունենալու հանգամանքը²⁴: Սակայն այս ձևակերպումը հնարավորություն կտար նման հանցագործություն կատարողներին խուսափել պատասխանատվությունից այն պատրվակով, որ գործողությունները չեն կրել պարբերական բնույթ: Բայց ԱՄՆ-ի պատվիրակությունը, հավանաբար՝ ամերիկյան տեղաբնիկների ազգային ու կրոնական հուշարձանների ոչնչացման հետ կապված որոշակի սպառնալիքներ կանխատեսելով, կարողացավ մոբիլիզացնել իր կողմնակիցների ձայները և չեզոքացնել ԽՍՀՄ-ի առաջարկը: Մերժումը հիմնավորվում էր նրանով, որ վերը նշված հանցագործությունները շեղում են ցեղասպանության հանցագործության բուն հանցակողմից և ավելի շուտ վերաբերում են մարդու իրավունքների պաշտպանության ոլորտին:

Այսպիսով, Հայոց ցեղասպանության մշակութային հետևանքների վերացման տեսակետից չափազանց կարևոր՝ ազգային-մշակութային ցեղասպանության մասին դրույթը, ցավոք, տեղ չգտավ Կոնվենցիայի տեքստում, ինչը պետք է համարել փաստաթղթի գլխավոր թերություններից մեկը:

Լուրջ քննարկման առարկա դարձավ այն հարցը, թե ո՞ր մարմնին պետք է դիմեն պայմանագրի անդամ պետությունները՝ ցեղասպանության Կոնվենցիայի կամ նրա առանձին դրույթների խախտման դեպքերում: Նախնական տարբերակում ձևակերպումն անորոշ էր, քանզի պետք է դիմեին ՄԱԿ-ի իրավասու մարմնին, սակայն անհայտ էր, թե կոնկրետ որին: ԽՍՀՄ-ն առաջարկում էր կոնկրետացում մտցնել և այդ դեպքում դիմել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին, որովհետև այդ մարմնի վրա են դրված խաղաղության և միջազգային անվտանգության պահպանման գլխավոր պարտավորությունը, սակայն առաջարկությունը մերժվեց ԱՄՆ-ի ու նրա դաշնակիցների կողմից:

Բացի այդ, VIII հոդվածի հետ կապված՝ ԽՍՀՄ-ն առաջարկում էր անդամ երկրների համար հայեցողական բնույթ ունեցող «կարող են դիմել» ձևակերպումը փոխարինել ավելի հստակ «պարտավորվում են դիմել» տարբերակով²⁵: Սակայն դա չընդունվեց, քանի որ ԱՄՆ-ը և նրա դաշնակիցները գտնում էին, որ դա ոչ թե անդամ երկրների պարտավորությունն է, այլ իրավունքը և որ կարիք չկա նման

24 Տե՛ս **Андрюхин М. И.**, Геноцид – тягчайшее преступление против человечества, с. 87.

25 Տե՛ս **Андрюхин М. И.**, նույն տեղում, էջ 108:

ղեկավարում դիմել հենց Անվտանգության խորհրդին: Այս հանգամանքը նույնպես վկայում է, որ Կոնվենցիայի կանխարգելիչ բնույթը բավականին թույլ է արտահայտվել նրա տեքստում՝ երկու ճամբարների փոխադարձ հակազդեցության պատճառով:

Այսպիսով, անզիջում պայքարի արդյունքում Կոնվենցիան, ըստ էության, դարձավ երկու հակադիր ճամբարների, ավելի ստույգ՝ այդ ճամբարների առանցքներ ԽՍՀՄ-ի ու ԱՄՆ-ի միջև ձեռք բերված փոխզիջումային մի փաստաթուղթ: Կոնվենցիայի թերությունները և բացերը, թերևս, պետք է բացատրել այն իրողությամբ, որ այն փոխզիջում էր երկու գերտերությունների միջև, ինչն, անշուշտ, բացասաբար անդրադաձավ նրա թե՛ բովանդակության և թե՛ կիրառելիության վրա:

3. ՄԱԿ-ի ցեղասպանության մասին Կոնվենցիայի թերությունները

Երկու ճամբարների միջև սկիզբ առած առճակատումը չէր կարող բացասաբար չանդրադառնալ Կոնվենցիայի դրական հատկանիշների վրա, ինչի արդյունքում փաստաթուղթն ունի մի շարք էական թերություններ, որոնք բավականին նվազեցնում են նրա կիրառման հնարավորությունները ցեղասպանության հանցագործության կանխարգելման և հանցագործ պետություններին պատասխանատվության կանչելու առումով:

Ցեղասպանության Կոնվենցիայի փիլիսոփայությունը ելնում է նախ և առաջ՝ նրա կանխարգելիչ գործառնության, քանզի հանցագործության համար պատիժ սահմանելը չպետք է լինի ինքնանպատակ՝ սուկ խնդիր դնելով պատժել այն անձանց, ովքեր մեղավոր կճանաչվեն հանցագործությունն իրականացնելու մեջ: Ավելին՝ պատժելու իմաստը նաև տվյալ հանցագործության հետևանքների վերացումն է, որը չի կարող ապահովվել ֆիզիկական անձանց պատասխանատվության ենթարկելով: Հետևանքների վերացումը հնարավոր է միայն պետության պատասխանատվության հնարավորության մասին դրույթի ամրագրումով: Դիշտ այնպես, ինչպես Հայոց ցեղասպանության հետևանքները չվերացվեցին երիտթուրքերի դատավարությամբ, երբ ընդամենը՝ դատապարտվեցին որոշ ֆիզիկական անձինք: Մյուս կողմից, հազիվ թե տուցիները կամ բոսնիացի մահմեդականները լիովին բավարարված են հատուկ տրիբունալների կայացրած վճիռներով, քանզի գտնում են, որ իրենց նկատմամբ իրագործված ցեղասպանության հետևանքները այդ հանցագործությունների մի քանի կազմակերպիչների դատապարտումով չեն վերացվել, և նրանք իրավացի են:

Պետության պատասխանատվության սկզբունքի հակառակորդները պնդում են, թե նման դրույթի միջոցով քրեականացվում են պետության գործողությունները: Այդ իսկ պատճառով ՄԱԿ-ի Միջազգային իրավունքի հանձնաժողովը «Խաղաղության և մարդկության անվտանգության դեմ կատարված հանցագործությունների օրենսգրքի նախագծի» պետության պատասխանատվության մասին հողվածներում «միջազգային հանցագործությունը» վերաճնակերպեց իբրև «միջազգային հակաօրինական կարգի գործողություն» կամ «ընդհանուր միջազգային իրավունքի իմպերատիվ նորմերից բխող պատասխանատվությունների լուրջ խախտումներ»:

Միանգամայն իրավացի էր Յու. Բարսեղովը, երբ նշում էր, թե ամբողջ ժողովուրդը չի կարող ոչնչացվել անհատների կողմից, այդ հանցագործությունը կարող է կատարել միայն պետությունը, պետական ապարատի՝ կառավարության, իշխանության տեղական մարմինների, բանակի, ոստիկանության, քարոզչական ծառայությունների, զանգվածային լրատվամիջոցների միջոցով: Սակայն ասվածի և Կոնվենցիայի IV հոդվածի միջև, ըստ էության, չկա որևէ հակասություն, քանզի պետությունը տվյալ հանցագործությունը գործում է միջնորդավորված՝ վերջը նշված կառույցների միջոցով, իսկ Կոնվենցիայի IV հոդվածն իր հերթին նույնպես անուղղակիորեն ընդգծում է այդ միջնորդավորվածությունը որոշակի անհատներով, որոնք հանդիսանում են սահմանադրությամբ պատասխանատու կառավարողներ կամ մասնավոր անձինք:

Կոնվենցիայի հեղինակներին հաջողվել է փաստաթղթի վերջնական տեքստի մեջ մտցնել միայն IX հոդվածով նախատեսված ձևակերպումը, որով այս կամ այն պետության նկատմամբ անորոշ պատասխանատվություն է սահմանվում միայն ցեղասպանության իրականացման կամ III հոդվածով նախատեսված գործողությունների համար: Տվյալ հոդվածի գործողությունների թվում են՝ ցեղասպանությունն իրականացնելու նպատակով կազմակերպված դավադրությունը, ցեղասպանության իրականացման ուղղակի և նպատակային փորձը, ցեղասպանությանը հանցակցելը²⁶: Սակայն Կոնվենցիայի հեղինակները չեն կողմնակցել ցեղասպանություն իրականացրած պետության պատասխանատվության բովանդակությանն առնչվող՝ միջազգային իրավունքում արդեն իսկ ձևավորված սկզբունքներն ու նորմերը, ինչպես նաև չեն նախանշել գործնական միջոցներ, որոնք ուղղված կլինեին ցեղասպանության զոհ դարձած ժողովրդի կամ այլ խմբի գոյության իրավունքի վերականգնմանը²⁷:

Փաստորեն ցեղասպանության հանցակազմը բնորոշող Կոնվենցիայի III հոդվածում թվարկված գործողություններում կարող են մեղադրվել ու պատասխանատվության կանչվել ոչ միայն անհատները, այլև պետությունները, քանզի նույն փաստաթղթի IX հոդվածը իրավունք է տալիս Կոնվենցիայի անդամ ցանկացած պետության այդ հարցով դիմելու Միջազգային դատարան²⁸: Սակայն, ինչպես նշեցինք, Կոնվենցիայի հեղինակները տվյալ փաստաթղթում չեն ամփոփել հանցագործությունն իրագործած պետության պատասխանատվության բովանդակության վերաբերյալ միջազգային իրավունքի նորմերն ու սկզբունքները:

Այս հանգամանքը թերևս բացատրվում է նրանով, որ տեսական ու գործնական առումով միջազգային իրավունքի ամենաբարդ հիմնախնդիրներից մեկը պետության պատասխանատվության հիմնահարցն է: Եթե ֆիզիկական անձանց նկատմամբ միջազգային քրեական արդարադատության իրագործման հաջող օրինակ կարելի է համարել այն պրակտիկան, որը կապված է Երկրորդ աշխարհամարտի ընթացքում հրեաների և սլավոնական ժողովուրդների ցեղասպանության համար նացիստներին Նյուրնբերգյան դատավարության միջոցով պատասխանատվության ենթարկելու հետ, ապա ցեղասպանության համար պետությանը

26 St'u Права человека. Сборник международных договоров, том I (часть вторая). Универсальные договоры ООН, Нью-Йорк и Женева, 1994, с. 781.
 27 St'u Барцеров Ю. Г., Ответственность государства за геноцид в международном праве и международной политике. «Геноцид – преступление против человечества. Материалы I Московского международного симпозиума», М., 1997, с. 97.
 28 St'u Права человека. Сборник международных договоров, с. 782.

պատասխանատվության ենթարկելու դրույթի հստակեցման տեսակետից կարելի է ասել, որ որոշիչ նշանակություն ունի այն յուրահատուկ պրակտիկան, որը կապված է հայ ազգային խումբը կազմաքանդելու համար թուրքական պետության նկատմամբ միջազգային պատասխանատվության հաստատման հետ²⁹:

Ալցնհայտ է, որ անգամ Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո էլ չհաջողվեց կանխարգելել այնպիսի ցեղասպանության օրինակներ, ինչպիսիք են Կամբոջայում կարմիր կիսմերձերի իրագործած ցեղասպանությունը, իսկ 20-րդ դարավերջն ընդհանրապես աչքի ընկավ ցեղասպանությունների «շքերթով»՝ սկզբում Ռուանդայում, հետո՝ նախկին Հարավսլավիայի տարածքում և ապա՝ Դարֆուրում: Թեև շարունակում են գործել Ռուանդայի, նախկին Հարավսլավիայի ad hoc դատարաններն ու Միջազգային քրեական դատարանը, միևնույն է, դեռևս իրական երաշխիքներ չկան, որ չեն կրկնվի ցեղասպանության նոր օրինակներ: Եվ այս ամենի հիմքում, կարծում ենք, ընկած է 1948 թ. կոնվենցիայի անկատարությունը:

Ֆիզիկական անձանց պատասխանատվության ենթարկելով՝ անհնար է կանխարգելել ցեղասպանություն հանցագործությունը կամ վերացնել արդեն իսկ կատարված հանցագործության հետևանքները: Խնդիրն այն է, որ անգամ ցեղասպանություն հանցագործության կազմակերպիչներին մահապատժի ենթարկելու դեպքում տվյալ հանցագործությունը և նրա հետևորդները, ինչպես երիտթուրքերի պարագլուխները, դիտվում են իբրև ազգային հերոսներ: Թուրքական հասարակության մեջ շատերն այսօր էլ համոզված են, որ նրանք կարևոր պատմական առաքելություն են կատարել իրենց ազգի ու պետության համար և վերջում իրենց կյանքն են գոհաբերել՝ հավերժ հերոսանալու ձգտումով:

Այդ իսկ պատճառով ցեղասպանություն հանցագործության կանխարգելման իրական լծակ պետք է համարել պետության պատասխանատվության սահմանումը: Եթե պոտենցիալ ցեղասպան պետության ղեկավարները գիտակցեն, որ չեն տիրանալու ցեղասպանության պտուղներին՝ ո՛չ տարածքի և ո՛չ էլ գոհերի խմբի անշարժ գույքի և այլ ունեցվածքի տեսքով, դեռ ավելին, կորցնելու են իրենց պետական իշխանությունը այն տարածքի նկատմամբ, որի բնակչությունը դարձել է ցեղասպանության զոհը, հազիվ թե նրանց մոտ գալթակողություն առաջանան մասն քաղաքականության միջոցով լուծելու իրենց խնդիրները:

Կոնվենցիայի ակնհայտ թերությունների շարքում կարելի է առանձնացնել նաև այն, որ հողված II-ում ցեղասպանության զոհ-խմբերը բավականին սահմանափակ են՝ ազգային, էթնիկ, ռասայական կամ կրոնական: Այս սահմանումը լուրջ դժվարություններ է առաջացնում մինչ օրս Կամբոջայի ցեղասպանությանը միջազգային իրավական գնահատական տալու առումով: Պատճառն այն է, որ կարմիր կիսմերձերն, ըստ էության, ցեղասպանությունն իրականացրել են սեփական ժողովրդի սոցիալական կոնկրետ շերտի, հիմնականում՝ քաղաքային բնակչության և իրենց քաղաքական հայացքները չկիսող զանգվածների նկատմամբ: Ալցնհայտ է, որ այս խմբերը որևէ կերպ չեն համապատասխանում Կոնվենցիայի II հողվածում թվարկվածներին:

Նույն դժվարության առաջ էր կանգնած Ռուանդայի տրիբունալը, որը քննում էր խուտու ցեղախմբի կողմից տուցիների նկատմամբ իրականացված ցեղաս-

29 Տե՛ս **Барцеров Ю. Г.**, Ответственность государства за геноцид в международном праве и международной политике с. 100.

պանությունը: Ու թեև դատարանը հստակ գիտակցում էր, որ, ըստ էության, տու-
ցիների ու խուտուների միջև ազգային, էթնիկ, ռասայական ու կրոնական էական
տարբերություններ չկան, այնուամենայնիվ, իբրև զոհ ճանաչեց տուցիներին՝
նրանց որակելով իբրև կայուն և մշտական խումբ³⁰:

Այս իմաստով հատկանշական է, որ որոշ երկրների քրեական օրենսգրքերում
ցեղասպանության հանցագործության օբյեկտների շրջանակը բավականին ընդ-
լայնված է: Օրինակ՝ Լատվիայի քրեական օրենսգրքի 7-րդ հոդվածում, բացի
Կոնվենցիայում թվարկվածներից, նշվում են նաև սոցիալական խմբեր և խմբեր,
որոնք ունեն որոշակի ընդհանուր համոզմունքներ³¹, իսկ Լեհաստանի քրեական
օրենսգրքի 118-րդ հոդվածի 1-ին մասում ցեղասպանության հանցագործության
զոհ-խմբերի շարքում ավելացրել են քաղաքական և որոշակի աշխարհայացք ու-
նեցողներին³²:

Կոնվենցիայի II հոդվածում, ցեղասպանության իրականացման սուբյեկտիվ
կողմի հետ կապված, ընդգծվում է նաև որևէ խմբի ոչնչացնելու մտադրության
առկայությունը: Առաջին հայացքից թվում է, թե ցեղասպանություն հանցագոր-
ծության հետևանքների՝ միլիոնավոր մարդկային զոհերի փաստն արդեն իսկ բա-
վարար է, որպեսզի տվյալ հանցագործության կատարման «մտադրության» հիմ-
նավորման կարիք այլևս չլինի, քանզի առանց «մտադրության» անհնար է
ոչնչացնել որևէ էթնիկ խմբի այդքան ներկայացուցիչների: Անշուշտ, միջազգային
իրավունքում կան այս տեսակետի կողմնակիցներ, որոնց թվում էր նաև հայտնի
միջազգայնագետ Յու. Բարսեղովը: Մակայն կան մասնագետներ, որոնք պնդում
են, որ «մտադրությունը» պետք է հիմնավորվի՝ առանց հղում կատարելու հանցա-
գործության հետևանքների վրա, և որ ցեղասպանություն կատարելու անհատնե-
րի կամ պետության «մտադրությունը» առանձին ապացուցման կարիք ունի: Այս
դիրքորոշման կողմնակիցները հիմնվում են ցեղասպանություն իրականացրած
անհատների կամ պետության «անմեղության կանխավարկածի» վրա: Ընդ որում,
տվյալ դեպքում «մտադրության» ապացուցման ծանրությունը դրվում է ցեղաս-
պանված ժողովրդի ուսերին, որը գրկվել է իր պատմական հայրենիքից, նյութա-
կան արժեքներից ու քաղաքական ինքնարտահայտման միջոցներից: Այսպիսով
հարցականի տակ է դրվում նաև ցեղասպանության զոհ հանդիսացող ժողովրդի՝
միջազգային հանրության օգնությանը դիմելու իրավունքը՝ հանցագործ պետու-
թյանը պատասխանատվության ենթարկելու համար:

Խնդիրը բարդանում է նաև նրանով, որ «մտադրությունը» կարող է փոխկա-
պակցվել նույն հոդվածում առկա «ամբողջությամբ կամ մասնակի» ձևակերպ-
ման հետ: Դրանով իսկ կարող է հարց առաջանալ, եթե ապացուցվում է, որ հան-
ցագործ պետությունը մտադրություն է ունեցել ոչնչացնել ոչ թե ամբողջ խումբը,
այլ ընդամենը մի մասը, օրինակ՝ կոնկրետ տարածքում բնակվող տվյալ խմբի մի
հատվածին, արդյո՞ք սրանից հետևում է, որ դա ցեղասպանություն է, թե՞ պետք է
ապացուցել, որ մտադրություն է եղել ոչնչացնելու ամբողջ խումբը՝ ոչ միայն տվյալ
պետության տարածքում, այլև դրա սահմաններից դուրս: Իսկ գուցե անհրաժեշտ

30 Տե՛ս **Островский Я.А.**, Практика Международного уголовного трибунала по Руанде – преступление геноцида. Материалы симпозиума «Международный курс по МГП для государственных служащих и представителей академических кругов», Москва, 16-19 сентября 2003г., с. 200.

31 Տե՛ս **Уголовный кодекс Латвии**, СПб., 2001.

32 Տե՛ս **Уголовный кодекс Польши**, СПб., 2001.

է առանձին-առանձին հիմնավորել կոնկրետ տարածքներում տվյալ խմբի ոչնչացման միտումը, որպեսզի այն որակվի իբրև ցեղասպանություն: Ինչևիցե, նշված ձևակերպումը կարող է հիմք ծառայել նաև Հայոց ցեղասպանությունը ժխտողների համար, որպեսզի Կոնվենցիայի 2-րդ հոդվածը ոչ միայն երկակի, այլև տարաբնույթ մեկնաբանությունների չենթարկվի: Տարաբնույթ մեկնաբանություններից խուսափելու նպատակով առավել ճիշտ կլինի, որ Կոնվենցիայի 2-րդ հոդվածում «մտադրություն ունենալով» ձևակերպումը փոխարինվի «գործողություններ, որոնք ուղղված են» տարբերակով, ճիշտ այնպես, ինչպես Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքի 357-րդ հոդվածում է³³:

Ինչ վերաբերում է ցեղասպանության հանցագործության ընդդատության հարցին, ապա այս առումով պետք է նշել, որ, ելնելով այն հանգամանքից, որ ոչ բոլոր երկրներն են ստորագրել ու վավերացրել ցեղասպանության մասին Կոնվենցիան և հետևաբար՝ պարտավորություն վերցրել իրենց ազգային օրենսդրությունը համապատասխանեցնելու Կոնվենցիայի դրույթներին, իսկ որոշ երկրներ՝ ի դեմս Թուրքիայի, անգամ ստանձնելով նման պարտավորություն, միևնույն է, իրենց օրենսդրության մեջ ունեն հոդվածներ, որոնք բարենպաստ պայմաններ են ստեղծում ազգային ատելության համար, ազգային դատարանների խնդիրը միանշանակ պետք է փոխարինվի միջազգայինով: Պատճառն ակնհայտ է. ազգային դատարանները բոլոր դեպքերում առաջնորդվելու են ազգային օրենսդրության դրույթներով, որոնք երբեմն խիստ սուբյեկտիվ են:

Ակնհայտ է նաև, որ որոշ երկրներ չեն ճանաչում միջազգային իրավունքի գերակայությունը ազգայինի նկատմամբ: Հատկապես, երբ խոսքը վերաբերում է միջազգային քրեական իրավունքի նորմերին, առաջ է գալիս ազգային օրենսդրությունը միջազգայինին համապատասխանեցնելու խնդիրը, ինչը Կոնվենցիայի V հոդվածի պահանջն է: Սակայն չնայած այդ հոդվածի առկայությանը, Կոնվենցիայի անդամ պետություններից ոչ բոլորն են իրականացրել տվյալ պարտավորությունը: Բացի այդ պետք է նշել, որ ոչ բոլոր պետություններն են միացել Կոնվենցիային (1991 թ. հունվարի 1-ի դրությամբ՝ ընդամենը 101 անդամ-պետություն)³⁴: Սա նշանակում է, որ մյուս երկրները ձևականորեն անգամ չեն ստանձնել իրենց ազգային օրենսդրությունը Կոնվենցիայի դրույթներին համապատասխանեցնելու պարտավորություն: Այդ իսկ պատճառով Կոնվենցիայի նորմերը պետք է դիտվեն իբրև միջազգային իրավունքի ունիվերսալ նորմեր:

Այն երկրում, որտեղ իրագործվել է ցեղասպանություն ազգային խմբերից մեկի նկատմամբ, տվյալ հանցագործության կազմակերպիչներին ազգային քրեական դատարանին հանձնելու հավանականությունը կարող է ծագել միայն այն դեպքում, եթե տեղի է ունեցել իշխանափոխություն և նոր կառավարությունը, ինչինչ քաղաքական նպատակներից ելնելով, շահագրգռված է պատասխանատվության կանչելու հին իշխանությանը: Այդ գործընթացը կիրառվեց Օսմանյան կայսրությունում՝ Առաջին աշխարհամարտում վերջինիս պարտություն կրելուց հետո, նպատակ հետապնդելով ոչ այնքան պատժել Հայոց ցեղասպանության կազմակերպիչներին, որքան թուրքական պետությունից հեռացնել ցեղասպանության մեղադրանքը: Ակնհայտ է, որ տվյալ դեպքում խոսքը ոչ թե իրական

33 Стѣу Уголовный кодекс Российской Федерации, М., 1997.

34 Стѣу Барсегов Ю., Геноцид армян – преступление по международному праву, М., 2000, с. 154.

արդարադատության, այլ ընդամենը քաղաքական խուսանավման մասին էր, ինչը իրականացվում էր նույն՝ թուրքական արդարադատության կողմից:

Ինչ վերաբերում է ցեղասպանության կատարման մեջ մեղադրվող մի պետության քաղաքացիներին մյուսին հանձնելու խնդրին, ապա գործնականում դա կարող է հնարավոր դառնալ միայն այն դեպքում, երբ մեղադրվող քաղաքացիների երկրի տարածքը օկուպացվի այն երկրի կողմից, որի տարածքում կատարվել է ցեղասպանությունը: Նման իրավիճակը հազիվ թե կարող է իրականություն դառնալ, սակայն անգամ այդ դեպքում կառաջանա էքստրադիցիայի խնդիրը:

Բարեբախտաբար այս հարցն արդեն իսկ լուծված է միջազգային իրավունքում: Բանն այն է, որ մի շարք երկրներ Կոնվենցիան ստորագրել էին վերապահումներով և 1951 թ. հունվարի 12-ին՝ փաստաթուղթն ուժի մեջ մտելուց հետո, Գլխավոր Ասամբլեան այդ հարցով դիմեց ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանին: Կոնվենցիայի IX հոդվածով փաստաթղթի դրույթների և հոդվածների մեկնաբանության ու կիրառելիության հարցերը դրված էին հենց այդ ատյանի վրա³⁵, ուստի Գլխավոր Ասամբլեան խնդրում էր պարզաբանումներ տալ Կոնվենցիայի հոդվածների վերաբերյալ պետությունների կատարած վերապահումների օրինակականության և կիրառելիության հարցում: Արդարադատության միջազգային դատարանը 1951 թ. իր խորհրդատվական եզրակացության մեջ, ընդհանուր առմամբ ճանաչելով պետությունների վերապահումներ անելու իրավունքը, ինչը ցանկացած պետության սուվերեն գործն է, այդուհանդերձ նշում էր, որ դրանք չեն կարող հակասել Կոնվենցիայում ամրագրված միջազգային իրավական նորմերի ոգուն ու բովանդակությանը: **ՄԱԿ-ի Միջազգային դատարանի խորհրդատվական եզրակացությունից հետո Կոնվենցիայի դրույթներն ու հոդվածները դարձան միջազգային իրավունքի իմպերատիվ նորմեր, քանզի այդ փաստաթղթում ամրագրվեց, որ Կոնվենցիայի հիմքում ընկած սկզբունքները ճանաչվում են բոլոր քաղաքակիրթ պետությունների կողմից որպես պարտադիր նույնիսկ առանց որևէ կոնվենցիոնալ ամրագրման**³⁶: Այսինքն՝ անկախ այն բանից՝ պետությունները մասնակից են ցեղասպանության մասին Կոնվենցիային, թե ոչ, տվյալ փաստաթղթում ամրագրված նորմերը պարտադիր են բոլոր երկրների համար:

Կոնվենցիայի բացերից ու թերություններից այսօր էլ փորձում են օգտվել թուրք «իրավաբան- միջազգայնագետները»՝ ձգտելով խեղաթյուրել Կոնվենցիայի դրույթները, դրանք ծառայեցնել Հայոց ցեղասպանության ժխտողականության պետական քաղաքականությանը: Այս գործում ժամանակին առավել «հմտացել էր» հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի նախկին անդամ Գյունդուզ Աքքանը: Քննարկելով Կոնվենցիայի կիրառելիությունը Հայոց ցեղասպանության նկատմամբ, թուրք «մասնագետը» հակված էր հայ ժողովրդին դիտարկելու իբրև «հանցագործ զոհի», քանզի, նրա կարծիքով, հայերը Օսմանյան կայսրությունում վեր էին անցել «քաղաքական խմբի» և պայքարում էին անկախության համար, և քանի որ «քաղաքական խումբը», ըստ Կոնվենցիայի, չի դիտվում ցեղասպանություն հանցագործության օբյեկտ, ուստի նրանց հետ կարելի է անել այն ամենը, ինչ որակվում է իբրև ցեղասպանություն, առանց դրա համար պատասխանատվությո-

35 Տե՛ս Международное право в документах, с. 337.

36 Տե՛ս Վարդանյան Վ., Հայերի դեմ իրագործած ցեղասպանության համար Թուրքիայի Հանրապետության միջազգային իրավական պատասխանատվության հիմքերը, էջ 24:

յուն կրելու³⁷:

Թուրք «մասնագետի» հաջորդ աղավաղումները կապված են ցեղասպանության հանցագործության հանցակազմում առկա «մտադրության» դրույթի հետ: Գ.Աքթանը «մտադրության» դրույթն ընկալում է տառաջիորեն և պահանջում է, որ ներկայացվի պաշտոնական հայտարարություն կամ փաստաթուղթ, որը կհաստատի, թե Օսմանյան կայսրությունը մտադրություն է ունեցել ոչնչացնելու ամբողջ հայ ժողովրդին: Պետք է նշել, սակայն, որ ինքը՝ Գ.Աքթանը, հետագայում հակասել է ինքն իրեն և նշել, որ նրանք, ովքեր կատարում են ցեղասպանություն, որպես կանոն, չեն հայտարարում տվյալ խումբը ոչնչացնելու մտադրության մասին՝ միաժամանակ շարունակելով պնդել իր տեսակետի վրա³⁸:

Անդրադառնալով Գ. Աքթանի կողմից միջազգային իրավունքի նորմերի ու մասնավորապես Կոնվենցիայի դրույթների այս աղավաղումներին՝ անվանի իրավաբան միջազգայնագետ Յու.Բարսեղովը ցույց է տվել, որ թուրք մասնագետն ընդամենը փորձել է միջազգային իրավունքի նորմերը հարմարեցնել ժամանակակից Թուրքիայի կողմից վարվող Հայոց ցեղասպանության ժխտման քաղաքականությանը:

Ամփոփելով՝ նշենք, որ չնայած իր ակնհայտ թերություններին ու բացերին՝ ՄԱԿ-ի ցեղասպանության մասին Կոնվենցիան իր ընդունման պահին լուրջ առաջընթաց էր միջազգային իրավունքում և ներկայումս նույնպես հանդիսանում է Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման այն կարևոր միջազգային իրավական գործիքներից մեկը, որը, սակայն, պետք է կատարելագործել՝ մեր ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող այդ ասպարեզում հաջորդության հասնելու համար: Այդ իսկ պատճառով Հայաստանը՝ որպես շահագրգիռ կողմ, Կոնվենցիայի շրջանակներում կարող է ձեռնարկել որոշակի քայլեր:

4. Հայաստանի Հանրապետության իրավունքները Կոնվենցիայի շրջանակներում

Հայաստանի Հանրապետությունը կարող է՝

1. Թուրքիայի Հանրապետության կողմից Հայոց ցեղասպանության ժխտողականությունը որակել իբրև հանցակցություն Հայոց ցեղասպանության մեջ, ինչը համապատասխանում է ՄԱԿ-ի ցեղասպանության մասին Կոնվենցիայի III հոդվածի e) կետին: Եվ այս առումով, Կոնվենցիայի դրույթների մեկնաբանության, կիրառելիության և գործադրման, ինչպես նաև Կոնվենցիայի III հոդվածում նշված գործողությունների համար Թուրքիայի Հանրապետության պատասխանատվության հարցերով դիմել Արդարադատության միջազգային դատարան:

2. Կոնվենցիայի VIII հոդվածի համաձայն՝ դիմել ՄԱԿ-ի համապատասխան մարմնին (օրինակ՝ Անվտանգության խորհրդին), պահանջելով ձեռք առնել կազմակերպության կանոնադրության դրույթներից բխող բոլոր միջոցները՝ Հայոց ցեղասպանության ժխտողականությունը կանխելու նպատակով և Թուրքիայի այդ գործողությունը զնահատելով իբրև ցեղասպանության հանցակցություն՝ հանցա-

37 Տե՛ս **Барсегов Ю.**, Турецкая доктрина международного права на службе политики геноцида, с. 57.

38 Տե՛ս նույն տեղում, էջ 59:

գործության հետքերը թաքցնելու նպատակով:

3. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Թուրքիան ժխտում է Հայոց ցեղասպանության փաստը, հիմնվել Կոնվենցիայի IX հոդվածի վրա, Հայոց ցեղասպանության հիմնահարցը ներկայացնել իբրև Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև ՄԱԿ-ի ցեղասպանության մասին Կոնվենցիայի շրջանակներում առկա վեճ, և առանց վերջինիս համաձայնության՝ այդ վեճը հանձնել Միջազգային դատարանի քննությանը:

4. Հիմնվելով Կոնվենցիայի XVI հոդվածի վրա՝ Հայաստանի Հանրապետությունը գրավոր ձևով կարող է ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին ներկայացնել Կոնվենցիայի բարեփոխումների նախագիծ, որը հետագայում պետք է ներկայացվի Գլխավոր ասամբլեային:

5. ՄԱԿ-ի 1948 թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիայի փոփոխությունների և լրացումների նախագիծ

Փոփոխությունների և լրացումների հիմնավորումը

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՄԱԿ-ի ցեղասպանության մասին Կոնվենցիան ընդունվել է ավելի քան 60 տարի առաջ և չի համապատասխանում միջազգային հարաբերությունների ու միջազգային իրավունքի ներկա պահանջներին,

-ընդգծելով, որ Կոնվենցիան ստորագրվել և ուժի մեջ է մտել «Սառը պատերազմի» տարիներին, ուստի և ԽՍՀՄ-ի ու ԱՄՆ-ի միջև առճակատման պայմաններում երկու կողմերից ներկայացված բազմաթիվ օրյեկտիվ ու օգտակար առաջարկներ չեն ընդունվել,

-արձանագրելով, որ Կոնվենցիայի նպատակներից առաջնայինը հանդիսանում է կանխարգելումը և հետո միայն՝ պատիժը, միևնույն ժամանակ նշելով, որ Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո էլ ցեղասպանության նոր օրինակներ են կատարվել, ինչը վկայում է Կոնվենցիայի կանխարգելիչ գործառնության անարդյունավետության մասին,

-փաստելով, որ հայ ժողովրդի նկատմամբ 20-րդ դարասկզբին իրականացված ցեղասպանությունը մինչ օրս մնացել է անպատիժ և Հայաստանում ու աշխարհի տարբեր երկրներում սփռված հայերը սերնդեսերունդ շարունակում են կրել այդ հանցագործության հետևանքները,

-նպատակ ունենալով հնարավորինս հստակեցնել Կոնվենցիայի դրույթների անորոշությունները, որոնք երբեմն տարաբնույթ մեկնաբանությունների հիմք են տալիս,

-ձգտելով բարձրացնել ցեղասպանության մասին Կոնվենցիայի գործադրման արդյունավետությունը,

Հայաստանի Հանրապետությունն, իբրև Կոնվենցիայի անդամ-պետություն, առաջարկում է **փաստաթղթում կատարել հետևյալ լրացումներն ու փոփոխությունները՝**

1. Հոդված II-ի³⁹ սկիզբը վերաշարադրել հետևյալ կերպ.

«Ներկայիս կոնվենցիայում ցեղասպանություն ասելով հասկացվում են

39 Տե՛ս Կոնվենցիայի հոդված II, Права человека. Сборник международных договоров, с. 780.

հետևյալ գործողությունները, որոնք ուղղված են ամբողջությամբ կամ մասնակիորեն որևէ ազգային, էթնիկ, ռասայական, կրոնական խմբերի կամ որոշակի այլ հատկանիշներով առանձնացվող կայուն խմբերի՝ որպես այդպիսին ոչնչացնելուն»:

2. Հոդված II-ում հանցավոր գործողությունները նկարագրող կետերում⁴⁰ ավելացնել մշակութային ցեղասպանությանը և տեղահանությանը վերաբերող դրույթներ՝

բ) Կանխամտածված կերպով խմբին առօրյա կյանքում, դպրոցներում մայրենի լեզվից օգտվելը կամ տվյալ խմբի լեզվով տպագրության տարածումն արգելելը,

ց) Կանխամտածված կերպով տվյալ խմբի գրադարանների, թանգարանների, դպրոցների, պատմական հուշարձանների, կրոնական ծեսերի և հոգևոր կառույցների կամ այլ մշակութային շինությունների ոչնչացումը կամ դրանցից օգտվելն արգելելը,

հ) Տվյալ խմբի անդամներին հարազատ բնօրրանից օտար միջավայր բռնի տեղահանելը (դեպորտացիան):

3. Հոդված III-ում պատժելի համարվող գործողությունների շարքում⁴¹ ավելացնել հետևյալ կանխարգելիչ դրույթները՝

բ) ցեղասպանության քարոզչությունը,

ց) այլատյացություն սերմանող կազմակերպությունների գործունեությունը թույլատրելը,

հ) ցեղասպանության գոհ-խմբի հայրենի տարածքի տնօրինումը («պատրիոցիդ») և ցեղասպանության հանցագործության նյութական պտուղներից օգտվելը:

4. Հոդված IV-ում, ֆիզիկական անձանց պատասխանատվության հետ կապված⁴², արձանագրել, որ վերադասի հրամանը չի կարող արդարացնել կատարողին.

«III հոդվածում թվարկված գործողություններից որևէ մեկը կատարած անձինք ենթակա են պատժի, անկախ այն բանից, հանդիսանում են նրանք սահմանադրությամբ պատասխանատու կառավարողներ, պաշտոնատար կամ մասնավոր անձինք և գործել են արդյոք վերադասի հրամանով, թե՞ ոչ»:

5. Հոդված IV-ում ֆիզիկական անձանց պատասխանատվությանը⁴³ զուգահեռ՝ հստակեցնել նաև պետությունների պատասխանատվության աստիճանը, ավելացնելով հետևյալ պարբերությունը՝

«Հոդված III-ում թվարկված գործողություններից որևէ մեկը խախտելու դեպքում պետությունները, որոնց տարածքում կատարվել են խախտումը կամ խախտումները, կարող են պատասխանատվության ենթարկվել՝ սույն կոնվենցիայով ստանձնած տվյալ պարտավորությունները չկատարելու համար: Պետությունները պարտավոր են նաև քայլեր ձեռնարկել գոհ-խմբի նկատմամբ ցեղասպանության հետևանքների վերացման ուղղությամբ, հիմնվելով միջազգային իրավունքի նորմերի ու պրակտիկայի վրա»:

6. Հոդված VI-ում⁴⁴ ցեղասպանության գործերով ամրագրել բացառապես մի-

40 Տե՛ս Կոնվենցիայի հոդված II, նույն տեղում, էջ 781:

41 Տե՛ս Կոնվենցիայի հոդված III, նույն տեղում:

42 Տե՛ս Կոնվենցիայի հոդված IV, նույն տեղում:

43 Տե՛ս Կոնվենցիայի հոդված IV, նույն տեղում:

44 Տե՛ս Կոնվենցիայի հոդված VI, նույն տեղում, էջ 782:

ջազգային դատարանի իրավասությունը, հողվածը վերաշարադրելով հետևյալ կերպ՝

«Ցեղասպանության կատարելու կամ հողված III-ում թվարկված գործողություններում մեղադրվող անձինք պետք է դատապարտվեն իրավասու Միջազգային քրեական դատարանի կողմից»:

7. Հողված VIII-ում⁴⁵ հստակեցնել, թե ՄԱԿ-ի կոնկրետ ո՞ր մարմնին կարող են դիմել Կոնվենցիայի մասնակից պետությունները ցեղասպանության գործողությունները կանխարգելելու պահանջով, հողվածը վերաշարադրելով հետևյալ կերպ՝

«Տվյալ կոնվենցիայի յուրաքանչյուր մասնակից կարող է դիմել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին՝ պահանջելով ՄԱԿ-ի կանոնադրության դրույթների համաձայն ձեռնարկել բոլոր միջոցները, որոնք, իր կարծիքով, անհրաժեշտ են III հողվածում թվարկված ցեղասպանության դեմ գործողություններից որևէ մեկի կանխարգելման ու կանխման նպատակով»:

Summary

THE DECEMBER 19, 1948 UN CONVENTION AND THE ARMENIAN GENOCIDE

An Analysis and Proposals in connection with the 60th Anniversary of the Document's Entry into Force

Armen Ts. Marukyan

The United Nation's Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide came into force during the Cold war. Thereby it is not accidental that at the time of the convention's adoption the United States of America and the USSR were, in reality, not trying to create preventative measures and to outline real punishment for the given crime through an internationally binding document, but rather they were trying to turn the convention into a tool to use against their opponent. As a result, many important provisions were left out of the document, and the Convention was turned into a simple document of mutual concession between the U.S. and the USSR. However, notwithstanding all the shortcomings, the adoption of the Convention was a serious step forward for international law. Presently the Republic of Armenia as a signatory to the Convention, and using the provisions in that document as a foundation, can present a proposal for amendments and additions and in doing so try to make it a more productive tool for the eradication of the consequences of the Armenian Genocide.

45 Տե՛ս Կոնվենցիայի հողված VIII, ճույն տեղում: